Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հունիսի 26 -ի N 389 - Ա որոշման

«Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
օգոստոսի 31-ի N 156-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻՋԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2018 ԹՎԱԿԱՆԻ

1.	Ծրագրի նպատակը	Հակահրդեհային նպատակով հատուկ տեխնիկայի (ջրի բաքով, պոմպով և այլ հակահրդեհային անհրաժեշտ սարքավորումներով հագեցած պիկապ ավտոմեքենաների), հատուկ հակահրդեհային արտահագուստի ձեռքբերում և սեփականության իրավունքով փոխանցում «Խոսրովի անտառ պետական արգելոց» և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ներին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից՝ բարեգործի պահանջով, «Բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջև 2018 թ. մարտի 28-ին կնքված դրամաշնորհային պայմանագրի 8-րդ կետի համաձայն:
3.	Բարեգործը	Կովկասի բնության հիմնադրամ Թուլպենհոֆշտրասսե 18, 63067, Օֆֆենբախ, Գերմանիա
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագրի իրականացնողն է Կովկասի բնության հիմնադրամը: «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հանդիսանում է ծրագրի կատարման օպերատորը՝ գնումների իրականացման մասով:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արարատի և Տավուշի մարզեր, Շրջակա միջավայրի պահպանություն
6.	Ծրագրի բյուջեն	Կովկասի բնության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի բյուջեն կազմում է **59 512 000 դրամ**: Ծախսերի ուղղությունները և չափերը՝ ըստ կետ 9-ի:

7.	Բարեգործություն ստացողը	«Խոսրովի անտառ պետական արգելոց» և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	10.07.2018 – 30.06.2019 թթ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Կովկասի բնության հիմնադրամի, Բնապահպանության նախարարության և «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջև 2018 թվականի մարտի 28-ին կնքված դրամաշնորհի տրամադրման մասին պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի ծրագիր՝ 10.07.2018 - 30.06.2019 թթ. – **59 512.0 հազար դրամ,** այդ թվում՝ 1. Ամենագնաց պիկապ ավտոմեքենաների ձեռքբերում՝ հակահրդեհային ավտոմեքենա վերափոխելու նպատակով (ներմուծում)՝ 4 հատ (2019 թ., 1-2-րդ եռամսյակ) – **49 111.2 հազար դրամ:** 2. Վերափոխման նպատակով համալրող տեխնիկական սարքավորումների ձեռքբերում (2019 թ., 2-րդ եռամսյակ) - **7200.8 հազար դրամ, այդ թվում՝** • ջրի բաք՝ առավելագույնը 0,8 տոննա տարողությամբ, 4 հատ - **134.0 հազար դրամ,** • ջրի բաք՝ առավելագույնը 3,0 տոննա տարողությամբ, 19 հատ - **2850.0 հազար դրամ,** • ռետինե ինքնահավաքվող խողովակ՝ իր թմբուկով, 240 մ – **360.0 հազար դրամ,** • բենզինային շարժիչով պոմպ՝ 8 հատ - **920.0 հազար դրամ,** • մեքենաների համար նախատեսված առաջին բուժօգնության պարագաների հավաքածու՝ 4 հատ - **31.0 հազար դրամ,** • ռացիա՝ 16 հատ – **304.0 հազար դրամ,** • հակահրդեհային խողովակ, 2 դյույմ՝ 780 մետր – **390.0 հազար դրամ,** • խողովակների միացման մասեր՝ 26 հատ – **104.0 հազար դրամ,** • մետալոպլաստե խողովակ, 1 դյույմ՝ 2000 մետր – **1320.0 հազար դրամ,** • սև պլաստիկե ճկուն խողովակ, 1 դյույմ՝ 800 մետր – **220.0 հազար դրամ,** • այլ պարագաների ձեռքբերում - **567.8 հազար դրամ:** 3. Հատուկ արտահագուստի ձեռքբերում՝ 16 լրակազմ /երկարաճիտ և կիսաճտքավոր կոշիկներ, համազգեստ, սաղավարտ/ (2019 թ., 2-րդ եռամսյակ) – **2400.0 հազար դրամ**: 4. Կոնստրուկցիայի հավաքման և տեղադրման ծառայություն (2019 թ., 2-րդ եռամսյակ) – **800.0 հազար դրամ:**
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Ամենագնաց պիկապ ավտոմեքենաների ձեռքբերում՝ հակահրդեհային ավտոմեքենա վերափոխելու նպատակով (ներմուծում)՝ – **49 111.2 հազար դրամ** (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում): 2. Վերափոխման նպատակով համալրող տեխնիկական սարքավորումների ձեռքբերում – **7200.8 հազար դրամ** (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում): 3. Հատուկ արտահագուստի ձեռքբերում՝ 16 լրակազմ /երկարաճիտ և կիսաճտքավոր

		կոշիկներ, համազգեստ, սաղավարտ/ - **2400.0 հազար դրամ** (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում): 4. Կոնստրուկցիայի հավաքման և տեղադրման ծառայություն – **800.0 հազար դրամ** (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի և Շրջակա միջավայրի նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, Շրջակա միջավայրի նախարարությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով լիազորված մարմնին:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ